**ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԾԱԾԿԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**№ 671885**

**ք. Երևան** «06» 02 **2026թ.**

«Ի-ՄԱՐԿ» ՍՊԸ (իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0025, Ե. Չարենցի փողոց 70/8 շենք, թիվ 75 տարածք, ՀՎՀՀ՝ 02284645, իրավաբանական անձանց պետական գրանցման համար՝ 269.110.1117158) (այսուհետ՝«Օպերատոր»), ի դեմս տնօրեն Հովհաննես Հովհաննիսյանի, ով գործում է Օպերատորի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ՀՀ առողջապահության նախարարություն» պետական կառավարչական հիմնարկ (իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կառավարական տ. 3, ՀՎՀՀ՝ 02507171, իրավաբանական անձանց պետական գրանցման համար՝ 286.184.1124131) (այսուհետ՝ «Մասնակից»), ի դեմս գլխավոր քարտուղար Վարդանուշ Գրիգորյանի, ով գործում է Մասնակցի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ Օպերատորը և Մասնակիցը միասին կանվանվեն՝ «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ»),

Հաշվի առնելով, որ՝
- Օպերատորը հանդիսանում է ՀՀ Կառավարության որոշմամբ նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման ազգային օպերատոր,

կնքեցին ապրանքների դրոշմավորման ծածկագրերի տրամադրման ծառայությունների մատուցման այս պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») հետևյալի մասին.

Սույն Պայմանագիրը հանդիսանում է Օպերատորի կողմից մատուցվող Ծառայություններից օգտվող՝ ապրանքախմբի ապրանքներ շրջանառող բոլոր անձանց հետ կնքվող տիպային պայմանագիր, որը վերոնշյալ անձանց հետ կնքվում է միևնույն բովանդակությամբ, ինչը հավասարապես վերաբերելի է նաև կնքված պայմանագրերում կատարվող հետագա փոփոխություններին և լրացումներին, բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագիրը համապատասխանեցվում է կոնկրետ Մասնակցի ձեռնարկատիրական գործունեությունից բխող առանձնահատկություններին:

## ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն Պայմանագրի նպատակների համար օգտագործվում են հետևյալ հասկացությունները (անկախ նրանից, թե Պայմանագրում մեծատառով են արտացոլված, թե փոքրատառով)՝

**Դեղ, պատվաստանյութ, կենսաբանական նյութեր** - Կանոններով սահմանված դրոշմավորման ենթակա ԱՏԳ ԱԱ 3002 41 000 0, 3004, 3006 30 000 0, 3006 60 000 ծածկագրերին դասվող ապրանքներ:

**Անձնական գրասենյակ** - Համակարգի բաղադրիչ, որը «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցի (այսուհետ՝ «Ինտերնետ») միջոցով Մասնակցին ապահովում է սահմանված կարգով հասանելիություն Համակարգին:

**Անձնական հաշիվ** – Համակարգում Մասնակցի եզակի նույնականացման համարով հաշիվ՝ կցված դրոշմավորման ենթակա համապատասխան ապրանքախմբին, որը ծառայում է դրամական միջոցների հաշվառման, Պայմանագրով սահմանված մատուցվող Ծառայությունների ծավալի գրառման և ծախսերի գրանցման համար:

**Դրոշմավորման ծածկագիր**- Օպերատորի կողմից գեներացված նիշերի եզակի հաջորդականություն, որը բաղկացած է նույնականացման ծածկագրից և ստուգման ծածկագրից:

**Ծառայություններ** – սույն Պայմանագրի 1.1 կետում նշված ծառայությունները:

**Կանոններ** – ՀՀ Կառավարության որոշմամբ սահմանված Դեղի, պատվաստանյութի, կոնտրաստային նյութերի դրոշմավորման կանոններ:

**Համակարգ** – ապրանքների դրոշմավորման ավտոմատացված տեղեկատվական համակարգ, որն ապահովում է դրոշմավորման ծածկագրերի տրամադրումը այն ապրանքների համար, որոնք ենթակա են դրոշմավորման Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

**Մասնակիցներ** - Օպերատորի կողմից մատուցվող Ծառայություններից օգտվող ԱՏԳ ԱԱ 3002 41 000 0, 3004, 3006 30 000 0, 3006 60 000 (դեղ, պատվաստանյութ, կոնտրաստային նյութեր) ապրանքախմբի ապրանքներ շրջանառող անձինք:

**Պատվեր** – Մասնակցի կողմից Համակարգում ներկայացված պատվեր, որի նպատակն է Համակարգում առկա Անձնական զրասենյակի կամ API-ի միջոցով գեներացնել (թողարկել) Դրոշմավորման ծածկագիր և Օպերատորից ստանալ (ներբեռնել) Դրոշմավորման ծածկագիր՝ համաձայն Պայմանագրում սահմանված դրույթների:

**API** (application programming interface)- ծրագրային ինտերֆեյս:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Օպերատորը պարտավորվում է Կանոններին համապատասխան ապահովել դեղի, պատվաստանյութի, կոնտրաստային նյութերի դրոշմավորման ծածկագրերի ձևավորումը Պատվերում նշված քանակին համապատասխան և տրամադրել դրանք Մասնակցին, իսկ Մասնակիցը պարտավոր է վճարել Ծառայությունների համար՝ ըստ Պայմանագրի պայմանների, եթե ՀՀ օրենսդրությամբ և/կամ Կողմերի համաձայնությամբ այլ պայման սահմանված չէ:

1.2. Ծառայությունների մատուցման նպատակով՝ Օպերատորը ապահովում է Մասնակցի հասանելիությունը Համակարգին՝ գրանցելով նրան Համակարգում, ինչպես նաև տրամադրում է Մասնակցին մուտքի հնարավորություն Համակարգի Անձնական զրասենյակ:

1.3. Պայմանագրի շրջանակներում դեղի, պատվաստանյութի, կոնտրաստային նյութերի դրոշմավորման նպատակով Օպերատորը Մասնակցին է տրամադրում Դրոշմավորման ծածկագրեր:

## 2. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Դրոշմավորման ծածկագրերի Պատվերի ներկայացումը Մասնակցի կողմից իրականացվում է ապրանքների դրոշմավորման Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

2.2. Սույն Պայմանագրի շրջանակներում Մասնակիցն իր գործողությունները Համակարգում իրականացնում է Համակարգում գրանցված իր ներկայացուցչի (այսուհետ նաև «Օգտատեր») միջոցով:

2.3. Օպերատորը գրանցում է Մասնակցին և Օգտատերերին Համակարգում, այնուհետև Մասնակիցը գրանցում է դրոշմավորման ենթակա ապրանքները Համակարգում:

2.4. Համակարգ մուտք գործելու համար Օգտատերերը Համակարգում նույնականացվում են ՀՀ-ում գործող նույնականացման եղանակների միջոցով՝ նույնականացման քարտի կամ բջջային նույնականացման քարտի (MID) միջոցով՝ նախօրոք սրամադրելով Օպերատորին Մատակարի իրավասու ներկայացուցիչների ցանկը և նրանց հանրային ծառայությունների համարանիշը:
2.5. Ապրանքների դրոշմավորումն ապահովելու համար Մատակարը և/կամ Օգտատերը Համակարգի միջոցով ներկայացնում է Դրոշմավորման ծածկագրերի Պատվեր: Պատվերի ձևն ու ձևաչափը հաստատվում է Օպերատորի կողմից և հասանելի է Մատակարին Համակարգում:
2.6. Օպերատորը պատասխանատվություն չի կրում Համակարգում Մատակարի կողմից ներկայացված/մուտքագրված տեղեկատվության համար, եթե տրամադրված տեղեկատվությունը խախտում է սահմանված ձևաչափը, պարունակում է սխալ տեղեկատվություն կամ չի պարունակում Օպերատորի կողմից սահմանված պարտադիր տեղեկատվությունը:
2.7. Համակարգ ուղարկված տեղեկատվության ամբողջականության, ճշգրտության և արդիականության պատասխանատուն Մատակարն է:
2.8. Սույն Պայմանագրի շրջանակներում Մատակարը Օպերատորին փոխանցում է անհրաժեշտ տեղեկատվությունը (այդ թվում Մատակարի պատվերը, Դրոշմավորման ծածկագրի մակնշման վերաբերյալ տեղեկությունները) իր Անձնական գրասենյակի միջոցով:
2.9. Դրոշմավորման ծածկագրերի թողարկումը, ինչպես և Պատվերի ներկայացումը մերժվում է հետևյալ դեպքերում՝

ա) Պատվերը չի համապատասխանում Օպերատորի կողմից հաստատված ձևին և/կամ ձևաչափին,

բ) Մատակարը կամ Օգտատերը Համակարգում արգելափակված է,

գ) Պատվերում նշված ապրանքի ծածկագիրը գրանցված չէ Համակարգում կամ չի պատկանում «Դեղ, պատվաստանյութ, կենսաբանական նյութեր» ապրանքախմբին,

դ) Համակարգում ապրանքի ծածկագրի համար նշված դեղի, պատվաստանյութի, կենսաբանական նյութերի փաթեթավորման տեսակը չի համապատասխանում պատվերի մեջ նշված ծածկագրի տեսակին:

2.10. Մատակարի կողմից Դրոշմավորման ծածկագրերի ներբեռնման ընթացքում Համակարգում ավտոմատ կերպով ձևավորվում է դրոշմավորման ծածկագրերի մակնշման մասին տեղեկությունների գրանցում, որոնք ներառում են տեղեկություններ ապրանքների շրջանառության մատակարի կողմից ստացված դրոշմավորման ծածկագրերի մասին:
2.11. Ծառայությունները համարվում են մատուցված Օպերատորից ստացված Դրոշմավորման ծածկագրի՝ Մատակարի կողմից ներբեռնման պահից:
2.12. Համակարգից Դրոշմավորման ծածկագրի ներբեռնումը մերժվում է, հետևյալ դեպքերում՝

ա. Հայցվող Դրոշմավորման ծածկագրերը չեն պատկանում մատակարին,

բ. Դրոշմավորման ծածկագրերը չեղյալ են հայտարարվել Մատակարի պահանջով,

գ. համապատասխան Պատվերի կատարման համար Մատակարի Անձնական հաշվում դրամական միջոցները բացակայում են կամ անբավարար են:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Օպերատորը պարտավորվում է.**

3.1.1. Պայմանագրով սահմանված տվյալները իրեն տրամադրելու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Մատակարին/Օգտատիրոջը տրամադրել մուտքի հասանելիություն Համակարգ և սույն Պայմանագրում նշված Մատակարի էլեկտրոնային

փոստի հասցեին ուղարկել Մասնակցին/Օգտատիրոջը Համակարգում գրանցման մասին ծանուցում,
3.1.2. Պայմանագրի պահանջներին համապատասխան Պատվերով թողարկել Դրոշմավորման ծածկագրեր և Համակարգի միջոցով տրամադրել դրանք Մասնակցին,
3.1.3. վերացնել Մասնակցի կողմից Համակարգի շահագործման ընթացքում ի հայտ եկած, բայց իր պատասխանատվության ներքո գտնվող թերությունները՝ դրանց առաջացման մասին Մասնակցից ծանուցում ստանալու պահից ողջամիտ (տեխնիկապես հնարավոր) ժամանակահատվածում,
3.1.4. ապահովել Մասնակցի կողմից Համակարգ մուտքագրված տեղեկատվության անվտանգությունն ու անփոփոխությունը:

**3.2. Օպերատորն իրավասու է.**
3.2.1. Ծառայություններ չմատուցել, քանի դեռ Մասնակիցը չի կատարել կանխավճարը, որն անհրաժեշտ է Պատվերի մեջ ներառվող դրոշմավորման ծածկագրերի ստացման - համար,
3.2.2. կատարել կարգավորող, տեխնիկական և կանխարգելիչ աշխատանքներ՝ իրավունք ունենալով Օպերատորի կողմից որոշված ժամանակահատվածի սահմաններում կասեցնել Համակարգի աշխատանքը՝ այդ մասին առնվազն 5 (հինգ) օր առաջ նախապես ծանուցելով Մասնակցին, եթե կասեցումը պայմանավորված չէ Համակարգում առկա խնդիրը հրատապ վերացնելու պահանջով:
3.2.3. արգելափակել Մասնակցի մուտքը Համակարգ՝ սույն Պայմանագրի պայմաններով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում:
3.2.4. Պայմանագրում նախաձեռնել փոփոխություններ և/կամ լրացումներ: Ընդ որում, Պայմանագրի էական պայմանների շուրջ առաջարկվող փոփոխությունները և/կամ լրացումները պետք է փոփոխությունները կատարելու նախատեսված ամսաթվից առնվազն մեկ ամիս առաջ քննարկման նպատակով ներկայացվեն բոլոր Մասնակիցներին: Կողմերը պարտավորվում են ներդնել առավելագույն ջանք՝ առաջարկվող փոփոխությունների և/կամ լրացումների, ինչպես նաև դրանց ուժի մեջ մտնելու պահի վերաբերյալ ողջամիտ ժամկետներում, սակայն ոչ ավել քան մեկ ամսվա ընթացքում, կոնսենսուսալ համաձայնության գալու նպատակով: Սույն կետով սահմանված պայմանների պահպանման դեպքում, եթե Մասնակիցն, այնուամենայնիվ, վերոնշյալ ժամկետում չի համաձայնում Օպերատորի կողմից Պայմանագրում առաջարկվող փոփոխություններին և/կամ լրացումներին, Օպերատորն իրավասու է միակողմանի կերպով վաղաժամկետ լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին 2 (երկու) ամիս առաջ ծանուցելով Մասնակցին: Այդ դեպքում Պայմանագրի լուծման հետևանքով Մասնակցի մոտ ծագող հնարավոր անբարենպաստ հետևանքների, այդ թվում՝ կրած վնասների համար Օպերատորը պատասխանատվություն չի կրում: Սույն ենթակետի իմաստով «էական պայման» են համարվում Ծառայության գինը, Ծառայության մատուցման ժամկետները, Պայմանագրի առարկան:
3.2.5. Պահպանել և մշակել Մասնակցի կողմից տրամադրված տվյալները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:
3.2.6. Օպերատորն իրավունք ունի արգելափակել Մասնակցի և/կամ գրանցված Օգտատիրոջ մուտքը Համակարգ հետևյալ դեպքերում.

ա) Մասնակցի կողմից Օպերատորին ներկայացվել է Օգտատիրոջ մուտքն արգելափակելու դիմում, եթե Մասնակցի և/կամ Օգտատիրոջ մասին ներկայացված տվյալները թույլ են տալիս նույնականացնել դիմողին,

բ) Իրավասու պետական մարմնից ստացվել է համապատասխան պաշտոնական գրություն առ այն, որ համապատասխան Մասնակցի գործունեությունը կասեցվել է (անորոշ կամ որոշակի ժամկետով դադարեցվել) կամ իրավաբանական անձ Մասնակիցը լուծարվել է,

գ) Մասնակցի կողմից 12 և ավելի ամիս անընդմեջ չի կատարվել Դրոշմավորման ծածկագրերի Պատվեր,

դ) Պատվիրվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված քանակից ավել Դրոշմավորման ծածկագրեր (նման սահմանափակման առկայության դեպքում),

ե) Օգտատիրոջ կողմից Համակարգն անբարեխիղճ, սույն Պայմանագրով չսահմանված նպատակով օգտագործելու, թվային տեխնոլոգիաներ կիրառելու միջոցով Համակարգը չարաշահելու, դրա խափանման փորձի կամ հակերային հարձակման կասկածի դեպքում,

զ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

**3.3. Մասնակիցը պարտավոր է.**

3.3.1. Ներկայացնել Պատվերները՝ համաձայն սույն Պայմանագրի և Համակարգում առկա/ սահմանված պահանջների,

3.3.2. Համակարգում ճիշտ լրացնել անհրաժեշտ բոլոր տեղեկությունները և տրամադրել ճշգրիտ տվյալներ,

3.3.3. Ծառայությունների դիմաց վճարումներն իրականացնել Պայմանագրով սահմանված կարգով,

3.3.4. Օպերատորին տրամադրել Մասնակցի կողմից Համակարգ մուտք գործող Օգտատերերի՝ Պայմանագրով անհրաժեշտ տվյալները,

3.3.5. Բարեխղճորեն կատարել Պայմանագրով սահմանված պարտավորությունները:

**3.4. Մասնակիցն իրավասու է.**

3.4.1. սույն Պայմանագրի գործողության ընթացքում Օպերատորին ներկայացնել Պատվերներ՝ անհրաժեշտ քանակի Դրոշմավորման ծածկագրերի համար,

3.4.2. Պայմանագրով սահմանված կարգով Օպերատորից ստանալ մուտքի հնարավորություն դեպի Համակարգ,

3.4.3. Համակարգի շահագործման ընթացքում հայտնաբերված և Օպերատորի պատասխանատվության ներքո գտնվող թերությունները շտկելու պահանջով դիմել Օպերատորին,

3.4.4. Ունենալ իր կողմից Համակարգ մուտքագրված տեղեկատվության անվտանգության ու անփոփոխության իրավունք:

**3.5. Կողմերի այլ իրավունքներ և պարտականություններ.**

3.5.1. Կողմերից յուրաքանչյուրն ինքնուրույն և իր հաշվին ապահովում է իր ծրագրային և ապարատային համալիրների և տեղեկատվական համակարգերի անվտանգությունը, որոնք ներգրավված են տեղեկատվական փոխգործակցության մեջ սույն Պայմանագրի շրջանակներում և ինքնուրույն կրում է այդպիսի ծրագրային և ապարատային համալիրներ և տեղեկատվական համակարգեր երրորդ անձանց կողմից չթույլատրված մուտքի հետ կապված ռիսկերը:

## 4. ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1. Դրոշմավորման 1 (մեկ) ծածկագրի գինը որոշվում է ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 1943-Ն որոշմամբ սահմանված կարգով:

4.2. Դրոշմավորման ծածկագրերի տրամադրման Ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է Մասնակցի կողմից 100% (հարյուր տոկոս) կանխավճարը Պայմանագրում նշված Օպերատորի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ մինչև Համակարգում Պատվերի մեջ ներառվող Դրոշմավորման ծածկագրերի ստացումը/ներբեռնումը ՝ վճարման նպատակ դաշտում նշելով սույն Պայմանագրի համարը: Վճարման նպատակում Պայմանագրի համարը սխալ կամ թերի լրացված լինելու դեպքում, գումարը հետ է վերադարձվում: Կանխավճարը փոխանցվում է Օպերատորի հաշվարկային հաշվին ՀՀ դրամով: Մասնակցի կողմից վճարված կանխավճարը հասանելի է լինելու Համակարգի Անձնական գրասենյակ Օպերատորի հաշվարկային հաշվին մուտք լինելու պահից մեկ

աշխատանքային օր անց: Պայմանագրով նախատեսված Ծառայությունների դիմաց վճարելիս բոլոր բանկային վճարները, ներառյալ միջնորդավճարները կրում է Մասնակիցը:
4.3. Կանխավճարների չափը և հաճախականությունը որոշվում են Մասնակցի կողմից ինքնուրույն՝ ելնելով Մասնակցի կողմից պահանջվող Դրոշմավորման ծածկագրերի քանակից: Մասնակիցն իրավունք ունի ցանկացած պահի հետ պահանջել իր չօգտագործված կանխավճարի գումարը, որն Օպերատորը պարտավոր է վերադարձնել բանկային փոխանցմամբ՝ Մասնակցի գրավոր պահանջը ստանալուց հետո 5(հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
4.4. Պատվերի միջոցով ստացած Դրոշմավորման ծածկագրերի քանակությանը համապատասխանող գումարը ելքագրվում է Մասնակցի Անձնական հաշվից, Ծառայությունների մատուցումից անմիջապես հետո:
4.5. Յուրաքանչյուր օրացուցային ամսվա (այսուհետ՝ «Հաշվարկային ժամանակահատված») ավարտից հետո, բայց ոչ ուշ, քան Հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող ամսվա 10-րդ օրը (ներառյալ), Օպերատորը Մասնակցին ներկայացնում է համապատասխան Հաշվարկային ժամանակահատվածի ընթացքում մատուցված Ծառայությունների հաշիվ-ապրանքագրերը (ՀՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվարկային փաստաթղթերը)՝:
4.6. Մատուցած Ծառայությունների հաշիվ-ապրանքագիրը ստանալու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Մասնակիցը պարտավոր է ստորագրել այն կամ ներկայացնել մատուցած Ծառայությունների հաշիվ-ապրանքագիրը չստորագրելու գրավոր հիմնավորված մերժումը:
4.7. Եթե Օպերատորը Պայմանագրում նշված ժամանակահատվածում Մասնակցից չի ստանում մատուցած Ծառայությունների հաշիվ-ապրանքագիրը չընդունելու մասին գրավոր հիմնավորված մերժում, Դրոշմավորման ծածկագրերի տրամադրման Ծառայությունները համարվում են Մասնակցի կողմից ամբողջությամբ ընդունված:
4.8. Մասնակցի անձնական գրասենյակում արտացոլվում է անձնական հաշվի ընթացիկ մնացորդի վերաբերյալ ակտուալ տեղեկատվություն՝ ըստ ապրանքային խմբերի, իսկ հաշվեգրումների մասին տեղեկությունները հասանելի են Համակարգի հաշվետվությունների բաժնում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Պայմանագրով սահմանած իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության և Պայմանագրի համաձայն:
5.2. Օպերատորը կրում է պատասխանատվություն Մասնակցի կրած իրական վնասի համար, բացառապես եթե Մասնակիցն իրականացնում է սույն պայմանագրից բխող իր պարտավորությունների ամբողջական, բարեխիղճ կատարումը, ինչպես նաև ձեռնարկում է անհրաժեշտ բոլոր միջոցները հնարավոր վնասների առաջացումը կանխելու կամ դրանց չափը նվազեցնելու համար: Սույն կետի իմաստով Օպերատորը պատասխանատվություն չի կրում այնպիսի վնասների համար որոնք առաջացել են վերջինիս մեղքի բացակայության պայմաններում, ինչպես նաև, երբ դրոշմավորման ծածկագրերը Մասնակցին փոխանցելու անհնարինությունն առաջացել է Օպերատորից չկախված հանգամանքների պատճառով, այդ թվում՝ տելեմատիկ կապի ալիքների օգտագործման, դրանց գերբեռնվածության, ինտերնետ կապի, հաղորդակցության գծերի, կապի ալիքների, Օպերատորի տիրապետման կամ վերահսկողության տակ չգտնվող այլ ապարատային և ծրագրային սարքավորումների շահագործման խափանումների հետ կապված հանգամանքների պատճառով:
5.3. Օպերատորը պատասխանատվություն չի կրում Մասնակցի կրած վնասի համար, եթե Օպերատորի կողմից պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը պայմանավորված է հանգամանքներով, որոնց համար պատասխանատու է Մասնակիցը:
5.4. Օպերատորը պատասխանատվություն չի կրում Մասնակցի կողմից Պատվերը կազմելու ժամանակ Մասնակցի մուտքագրած տվյալների, այդ թվում՝ անհրաժեշտ Դրոշմավորման ծածկագրերի քանակի սխալ լինելու համար:

5.5. Կողմերի կողմից սույժի/տուգանքի վճարումը նրանց չի ազատում Պայմանագրով նախատեսված իրենց պարտականությունները կատարելուց:

## 6. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐԱՅԻՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

6.1. Պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե պարտավորության չկատարումը եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, որոնք Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են ջրհեղեղը, հրդեհը, երկրաշարժը, համաճարակը, բնության այլ երևույթները, պատերազմական գործողությունները, ռազմական և/կամ արտակարգ դրություն հայտարարելը, պետական մարմինների կամ կառավարման և այլ մարմինների որոշումներ և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարումը:
6.2. Ֆորս-մաժորային հանգամանքների առկայության հաստատումը լիազորված մարմինների կամ լիազորված կազմակերպությունների գրավոր վկայագիրն է:
6.3. Կողմը, որը չի կատարում իր պարտավորությունները ֆորս-մաժորային հանգամանքների արդյունքում, պարտավոր է 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցել մյուս Կողմին ֆորսմաժորային հանգամանքների առաջացման և Պայմանագրի կատարման վրա դրանց ազդեցության մասին:

## 7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ

7.1. Պայմանագրի կնքման, կատարման և դադարեցման հետ կապված բոլոր վեճերը Կողմերը կլուծեն բանակցությունների միջոցով:
7.2. Եթե Կողմերի միջև համաձայնություն ձեռք չի բերվել, նրանց միջև վեճը ենթակա է լուծման Հայաստանի Հանրապետության դատարաններում ՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

8.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Պայմանագրի լուծման պահը:
8.2. Կողմերը կարող են Պայմայնագիրը ստորագրել նաև էլեկտրոնային ստորագրությամբ:
8.3. Կողմերը միմյանց հայտնում են իրենց հետևյալ վավերապայմանների փոփոխության մասին.

8.3.1. գտնվելու վայրը;

8.3.2. ՀՎՀՀ;

8.3.3. Մասնակցի/Օգտատիրոջ անվանումը/անուն, ազգանունը:

8.4. Կողմը իր վավերապայմանների փոփոխությունների մասին ծանուցում է մյուս Կողմին՝ ծանուցագիր ուղարկելով Պայմանագրի 9.2 կետում նշված եղանակներից որևէ մեկով:
8.5. Պայմանագրի լուծումը թույլատրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:
8.6. Օպերատորի նկատմամբ որևէ պարտավորություն չունենալու դեպքում Մասնակիցն իրավունք ունի ցանկացած պահի միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ այդ մասին առնվազն 30 (երեսուն) օր առաջ ծանուցելով Օպերատորին: Պայմանագրի գործողությունը դադարում է Օպերատորի կողմից լուծման մասին ծանուցագիրը ստանալու օրվանից 30

(երեսուն) օրյա ժամկետի ավարտից հետո, եթե ավելի ուշ ժամկետ սահմանված չէ համապատասխան ծանուցագրում:
8.7. Պայմանագիրը լուծվելու դեպքում Կողմերը պարտավոր են իրականացնել վերջնահաշվարկ երկկողմանիորեն կնքված փոխհաշվարկի ստուգման ակտի հիման վրա:

## 9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Պայմանագրով չկարգավորված հարցերի վերաբերյալ Կողմերն առաջնորդվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
9.2. Եթե Կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ՝ Կողմերի ամբողջ հաղորդակցությունն ու փաստաթղթաշրջանառությունը պետք է կատարվեն էլեկտրոնային եղանակով և ուղարկվեն Պայմանագրի 10-րդ բաժնում նշված Կողմերի էլեկտրոնային հասցեներին: Կողմի՝ մյուս Կողմին ուղարկված ծանուցումների ստացման ամսաթիվը համարվում է էլեկտրոնային նամակը տեսնելու/կարդալու մասին էլեկտրոնային հաստատման ամսաթիվը: Փաստաթղթերի պատճենները, փաստաթղթերի սկանավորված տարբերակները գործառնական փաստաթղթաշրջանառության և մատուցված Ծառայությունների ժամանակին վճարման համար պետք է ուղարկվեն էլ. փոստով:

9.3. Կողմերի կոնտակտները.

Օպերատորի կողմից.

Կոնտակտային անձ՝ Հովհաննես Հովհաննիսյան

Հեռախոսահամար՝ +374 10 300 300

Էլեկտրոնային հասցե՝ info@e-mark.am

Մասնակցի կողմից.

Կոնտակտային անձ՝ Վարդանուշ Գրիգորյան

Հեռախոսահամար՝ +374 (60) 80-80-03

Էլեկտրոնային հասցե՝ info@moh.am

9.4. Փաստաթղթերը Կողմերի համար համարվում են պատշաճ ուղարկված Պայմանագրում սահմանված կարգով ուղարկվելու դեպքում:
9.5. Կողմերից յուրաքանչյուրը հավաստում է, որ իրավասու է և լիազորված սույն Պայմանագիրը ստորագրելու և սահմանված պարտականությունները կատարելու համար, այդ թվում՝ յուրաքանչյուր Կողմը ստացել է ՀՀ օրենսդրությամբ և հիմնադիր փաստաթղթերով Պայմանագրի կատարման համար սահմանված բոլոր անհրաժեշտ թույլտվությունները և համաձայնությունները:
9.6. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն 2 հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ: Ստորագրելով Պայմանագիրը, Մասնակիցը հաստատում է, որ ստացել է Պայմանագրի հավաստարազոր բնօրինակը, կարդացել է Պայմանագրի պայմանները և համաձայն է դրանք համարել պարտադիր՝ Օպերատորի և Մասնակցի միջև իրավահարաբերությունների կարգավորման համար:
9.7. Ստորագրելով սույն Պայմանագիրը՝ Մասնակիցն իր անվերապահ համաձայնությունն է հայտնում Պայմանագրով նախատեսված Ծառայությունը մատուցելու նպատակով և շրջանակներում իր անձնական տվյալների մշակմանը, պահպանմանը և փոխանցմանը՝ ներառյալ անձնական տվյալների անդրսահմանային փոխանցմանը:
Անձնական տվյալների փոխանցման վերաբերյալ Օպերատորը պարտավոր է Մասնակցին ծանուցել սույն Պայմանագրի 9.2 կետում նշված եղանակներից որևէ մեկով:

9.8. Օպերատորը պարտավորվում է պահպանել, մշակել և փոխանցել Մասնակցի անձնական տվյալները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:
9.9. Սույն Պայմանագրի շրջանակներում Մասնակցի կողմից բացահայտված Մասնակցի գործունեությանը վերաբերող ցանկացած տեղեկատվություն համարվում է գաղտնի (այսուհետ՝ Գաղտնի տեղեկատվություն):
9.10. Մասնակցի գրավոր թույլտվության բացակայության դեպքում Օպերատորը պարտավորվում է պահպանել Գաղտնի տեղեկատվությունը և զերծ մնալ այն երրորդ անձանց որևէ կերպ (ուղղակի կամ անուղղակի) տրամադրելուց կամ հասանելի դարձնելուց, ինչպես նաև ի շահ իրեն կամ երրորդ անձանց դրանք օգտագործելուց, բացառությամբ գործող ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի: Սույն Պայմանագրի իմաստով երրորդ անձ չեն համարում Օպերատորի վարձու աշխատողները և Օպերատորի հետ ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագիր կնքած անձինք, որոնք մասնակցում են Պայմանագրի կատարմանը:
9.11. Սույն Պայմանագրի 9.8. և 9.9. կետերի պահանջների խախտման դեպքում Օպերատորը կրում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

## 10. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Օպերատոր**

«Ի-ՄԱՐԿ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0025, Ե. Չարենցի փողոց 70/8 շենք, թիվ 75 տարածք
ՀՎՀՀ՝ 02284645
Պետ.գրանցման համար՝ 269.110.1117158
հ/հ: 15700 69126360400
Բանկ: «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Էլեկտրոնային հասցե՝ info@e-mark.am
Տնօրեն՝ Հովհաննես Հովհաննիսյան

___________________

Կ.Տ.

**Մասնակից**

«ՀՀ առողջապահության նախարարություն» պետական կառավարչական հիմնարկ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կառավարական տ. 3
ՀՎՀՀ: 02507171
Պետ.գրանցման համար՝ 286.184.1124131
հ/հ: 900011018885
Բանկ: ՀՀ կենտրոնական գանձապետարան
Էլեկտրոնային հասցե՝ info@moh.am
Գլխավոր քարտուղար՝ Վարդանուշ Գրիգորյան

___________________/

Կ.Տ.